



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

24710

891.94

4-95



891.99  
4-95

180

ՓՈՒՆԶԻ

~~378~~

Հ Ա Տ Ը Ն Տ Ի Ր Ա Ռ Ա Կ Ա Ց

~~173~~

~~1784~~



ԳՐԵՑ  
Տ. Ա.



ՓՈՒՆԶ Ա



Փ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐ. Ա. ԳՈՇ ՊՅՈՒՆՆԵՆ  
1885



787



Յիշատակ է արդար հոգւոյ  
Վահան Լուծֆի գիրգ մանկան,  
Որ հազիւ մի գարուն կեցեալ  
Զբաժակն արք ժանտ մահուան:

Փ. Պոլես 2 Գեղա. 1885

Ի ԾՆՈՂԱՅՆ

24710 ահ

(114085-ԱԶ)



57118-66



Հ Ա Տ Ը Ն Տ Ի Բ Ա Ռ Ա Կ Գ



ԱՌԱԿ Ա

ՃՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Խաղ կանչեց ճարուն  
Աման ի բուն .  
Ու երբ ցուրտն եկաւ ,  
Պաշարն հատաւ :  
Գնաց դրացի  
Խրճիթ մըջիւնի .  
Աղաչեց զնա  
Որ իրեն փոխ տայ  
Մի քանի հատիկ ,  
Կամ կտոր մ'որդիկ :  
« Կերդնում որ , կրտէ ,  
Յառաջ մայիսէ  
Պարտքս վճարեմ .  
Շահ իսկ կը բերեմ : »  
Մըջիւնին մանրիկ  
Յանցանքն է փոքրիկ ,





Չը գթալ մարդու .  
 Նա չէ փոխատու  
 « Ի՞նչ բրիր յամուսն : »  
 Հարցուց ճպտան :  
 — « Ա՛խ , երգ երգեցի .  
 Գիտեմ , լաւ չբրի : » —  
 — « Ն՞րգ մի երգեցիր .  
 Բարի գործեցիր :  
 Ա՛րգ այժմ՝ ընդէր  
 Չես դու կաքաւեր : »



ԱՌՍԿ Բ

ՄՈՒԿՆ ՔԱՂԱՔԱՅԻ ԵՒ ՄՈՒԿՆ ՇԻՆԱԿԱՆ

Կը սրտունն որ երբեմն  
 Մի մուկ յոյժ ազնուական  
 Կոչեց ի ճաշ մուկ զամն  
 Բարեկամ իւր շինական :  
 Խնճոյքն եղաւ սրտորստ  
 Թանկագին գորգի վերայ :  
 Լոր , փասեան չէր սրտեր անդ .  
 Խրախճան էր եղեմայ :  
 Բայց , յանկարծ , սոսկալ ի բան .  
 Արահին դուռն է բացուեցաւ .  
 Տան մի ծառայն անպիտան  
 Փխտիկին հետ ներս մտաւ :

Մեր մուկերն ի՞նչ կը փախչին .  
 Եւ ի՞նչպէս կը խուճապեն :  
 Քառասուն քայլ մէկ բրին  
 Որ հոգինին ազատեն :  
 Ոտնաձայնն կը դողրի :  
 « Ա՛րգ , եկու՛ր , ընկեր , կըսէ ,  
 Մեր մուկն քաղաքացի .  
 « Խո՛մէ՛ , կեր ու կեանք ըրէ : » —  
 — « Հերիք է , կըսէ գեղջուկն .  
 Քո ճոխութեան աչք չունիմ :  
 Վաղիւ հրամէ՛ դու իմ տուն ,  
 Տես որչափ խաղալ կապրիմ :  
 Յապահովի հաց ցտնոք  
 Լաւ է քան խնջոյս ամեն .  
 Ահ ու դողով քո խրախճանք  
 Բարւով վայելս , ինձ պէտք չեն : »




ԱՌՍԿ Գ

ՄԱՀ ԵՒ ՓԱՅՏԱՀԱՐ

Փայտահար մ'աղքատ , ծանր բեռին տակ  
 Փայտի և տարեաց լեալ կորաքանակ ,  
 Լալով հեծելով յամրաքայլ կերթար ,  
 Մրճոտեալ խրճիթն հասնել կը ջանար :  
 Բայց , վատտակարեկ , ա՛յլ ճարք հատաւ .  
 Սիրան ի խոր խոցեալ գրեան վար դրաւ :



Բիւր սեաւ մոմսուք միաքը պատեցին .  
 Ու քաշած վշտերն աչքին դէմ բերին :  
 Կըսէ ինքիրեն . « Յօրէ յորմէ ծնայ  
 Ի՞նչ զուարճութիւն , ի՞նչ բերկրանք տեսայ :  
 Ո՞վ քան զիս չուտու , աղքատ զիւզացի .  
 Երբեմն տունով կարօտ եմք հացի :  
 Հանգիստ , բնաւ չունիմ . կին ու զուակներ ,  
 Զօրք , տարապարհակ , ծանրաբերձ հարկեր  
 Զիս կը ջլատեն : Այս քաշածս ի՞նչ է :  
 Ե՛կ չուտ , ո՞վ Մահ , չուտ եկ զիս ազատէ : »  
 Մահ դժոխադէմ անյապաղ եկաւ .  
 « Ի՞նչ հրաման ունիս , կատարեմ » ըսաւ :  
 Երբ ետես զնա , ծերն , սարսափահար ,  
 Կըսէ . « Ոչինչ , Տէր , սա բեռս վեր առ : »



ԱՌԱԿ Դ

ԳՍՅԼ ԵՒ ՇՈՒՆ

Մի քայլի միայն ոսկերքն ու կաշին  
 Էին մնացեր .  
 Զի չունքն կարիճ լաւ պահպանելին  
 Սիրուն զոչխարներ :  
 Անօթի , նքիժեալ , երբ ի պուրակին  
 Կեր , բաղը կը խնդրէր ,  
 Նշմարեց շուն մ'որ , կարուսեալ զուղին ,  
 Դէպ իրեն գիմէր :

Շուն սարարտ ու գեր , լի միտով , իւզով  
 Պոչ կերերցունէր .  
 Ու խնդում երես , զինքն ողջունելով  
 Ճամբայ հարցունէր :  
 Երբ զայն տեսաւ գայլն , բերնին ջուրերն  
 Սկսան վազել .  
 Մեծ փափաք զգաց յարձակել վրան  
 Ու զնա ուտել .  
 Սակայն մեր դամիտն ոչ միայն պարարտ  
 Այլ և հուժկու էր .  
 Ուստի զէմն ելնել , հետը դնել մարտ  
 Խոհեմութիւն չէր :  
 Այսպէս խորհելով զգաստ կենդանին  
 Լաւ կը համարի  
 Մօտն երթալ ու բարև տալ շունին .  
 Խօսիլ կըսկսի :  
 « Բարի եկիր , Տէր , այդ ի՞նչ գիրուկ ես ,  
 Այդ ի՞նչ աղւորիկ : » —  
 — « Զեռքդ է , ըսաւ շունն , լինել ինձի պէս  
 Պարարտ , գլորիկ :  
 Ե՛լ սա անտառէն , ուր քո հէգ ազգի ,  
 Յերեկ ու գիշեր ,  
 Դառն է վիճակ . զի սյլ յոյս չունի ,  
 Բայց նօթի մեռնել :  
 Զունիք մեզի պէս կերակուր առատ .  
 Ոչ իսկ ցամաք հաց :  
 Վտանդ ատեն ժամ ձեր գլխոյն պատրաստ ,  
 Հովիւք ոչխարաց :  
 Ե՛կ զու իմ զհետ , եթէ փափաքիս ,  
 Վիճակ լաւադոյն





Հանդիսա, ապահով կեանք ու տաք խալիս,  
 կուր առատագոյն:» —  
 « Բնիկեր, հարցոց Գայն, ինչ բնել պէտք է  
 Երբ որ հեռագ դամ:» —  
 — « Ոչ ինչ, կրակ Գանիսուն, միայն հալած է  
 Զօտարն յարածամ:  
 Զմէջ գիշերաւ թէ աղբուկ լսես,  
 Սակաւ ինչ հաջել,  
 Տան մարդկանց երբեմն, հեղ, գուարթերես,  
 Պոչդ խաղցունել  
 Պէտք է. այսչափ. այն ատեն քեզ կուտան  
 Առատ կերակուր.  
 Ոչ խարի սոկոր, հաւի ու եղան,  
 Աւելցուք սպուր:  
 Թող այն գողուանքն, զոր ամն մանկիկներ  
 . Գեղ կը շնորհեն.  
 Ու կառնուն զքեզ ամենայն տեղեր  
 Հեռ ժուռ կը բերեն:»  
 Գայն այս որ լսեց, ուրախութենէն  
 Սկսաւ խոցառլ.  
 Այն զրախառային երանութենէն  
 Աչքէն արտասուք գալ:  
 Երբ շան ետեւէն գէպ աւան կիջնէր,  
 Նշմարեց յանկարծ  
 Որ նորա վղին մորթն էր կեղեքեր,  
 Մաղերն էր փեռած:  
 Ապա հարցուց շան « Այդ ինչ է, բնիկեր,  
 Վիզդ ինչ եղեր է:» —  
 — « Գրեւթէ ոչ ինչ:» — « Վրադ կան վերքեր.  
 Միթէ այդ բան չէ:» —

— « Հն, կրակ շունն, տնուր կը դնեն.  
 Անկէց է թերես  
 Այդ քո տեսածդ:» — « Զքեզ կը կապեն. . .  
 Ինչ բսել կուզես:» —  
 — « Մերթ, բայց ինչ զնաս:» — « Պէտք չէ,  
 (Գայն ըսաւ,  
 Այդ չափ կուր ինձի.  
 Ազատութիւնս ես չեմ տար բնաւ  
 Եւ ոչ խկ գանձի:  
 Լաւ է որ մեռնիմ յանտախ աղբաւ  
 Թէպէտ անթի.  
 Գան թէ քո տունդ ուտեմ կեր սոտաւ,  
 Բայց լինիմ գերի:»  
 Գայն ազատասէր այսպէս խօսեցաւ. զայն թո-  
 (զուց փախաւ.  
 Եւ դեռ կը փախչի:



ԱՌԱՅ Ե

ՄՐՋԻՆ ՓԱՌՍՍԷՐ

Հերկէ դարձող եղին եղջիւրին վերայ  
 Փոքրիկ միջիւն նստեր մեծ մեծ կը խորխոսայ:  
 Գոյն ըսաւ. « Եզրայրիկ, ուստի կուգաս այսպէս:  
 Ընդէր այդչափ փառօք բարձր բազմեր ես:» —  
 — « Հըհ, քոյրս, դեռ չեմ հասկցեր.  
 Տակն ի վերայ ըրինք արտեր. . . . :»  
 կրակ միջիւնն յիմար  
 Անմտաբար:



ԱՌԱԿ Զ

ԱՌԻԻԾ ԵՒ ՄՈՒԿՆ

Որչափ կարեմք, բարի գործեմք ամենուն .  
 Կը պատահի լինել կարօտ յոյժ փոքուն :  
 Առակ մկան ապացոյց է այս բանի .  
 Չայն լաւ միտ ան , ով դու ուշիմ պատանի :

Մուկն անխոհեմ օր մի ծակէն դուրս ելեր ,  
 Անտառին մէջ Առիւծու ճանկ է անկեր ,  
     Կը պատմեն :  
     Եւ կըսեն

Թէ վեհանձն այն մեծ թագաւոր կենդանեաց  
 Գթաց վերայն ու նորա կեանք շնորհեաց :  
 Առիւծուն այս մեծ երախտիք չը կորաւ .  
 Թէպէտ որոյ մտքէն անցեր էր բնաւ  
 Որ նորա պէս մի զօրաւոր կենդանի  
 Չնչին մկան ծառայութեան կարօտի :  
 Այս կենդանին որսորդութեան ժամանակ  
 Յաւուր միում անկաւ երկաթ 'ի վանդակ .  
 Արք շինականք դիտմամբ էին զայն լարեր  
 Որ գագանէն փրկեն իւրեանց տուն տեղեր :  
 Խեղճ անասունն պոռաց , դանչեց , մոնչեց ,  
 Երկաթ տունէն ազատելոյ չաջողեց :  
 Երախտընկալ մուկն է կուգայ , կը վազէ .  
 Իւր սուր ժանեօք բանտին թելեր կը կրծէ :  
 Այնչափ կընէ որ նախ ցանցին մի հիւսկէն .  
 Կը քայքայէ , ապա բոլոր ցանցն անդէն :

Առիւծն է փրծաւ .  
 Եւ քնչպէս փախաւ  
 Գնաց յանապատ .  
 Ուրախ ու ազատ :

Վտանդի մէջ ողբ ու կոծ քնչ օգուտ է  
 Հնար խորհիլ ու ջանք ընել կը բաւէ :

ԱՌԱԿ Է

ԳՈՐՏՆ ԵՒ ԵՁՆ

Գորտն Եզ մի տեսաւ  
 Ընտիր հասակաւ .  
 Պարարա , գեր , կըր .  
 Վիզը լայն , ազւոր :  
 Նախանձու չար դեւ  
 Մտաւ գորտին սիրտ .  
 Կըսէ . «Արդարեւ  
 Մեղք որ եմ վտիտ :  
 Սակայն հարկ է որ  
 Լինիմ նման անոր  
 Շքեղ , փուռաւոր :»  
 Այսպէս մտածեց  
 Եւ ինքզինքն ուսեց .  
 Ուսեց , ճգնեցաւ ,  
 Մինչեւ պայթեցաւ :  
 Այլ խորհիւ մէջ կան մարդիկ  
 Որ Գորտէս շատ խելք չունին :



Թէպէտ անգոր , աղքատիկ ,  
 Բայց մեծ մեծ ծախքեր ունին :  
 Այնչափ ճիւղ , քիտս կը թափեն ,  
 Ծառայ , մեծ տուն կը վարձեն  
 Որ անոնս Գորափն նսան  
 Կը մտանուին կորստեան

—o—

ԱՌԱՅ Ը

ԾԻԾԱՌՆ ԵՒ ԹՈՉՆԻԿԻ

Մի ծիծառն բազում յուզեցրութեան  
 Ստացաւ ոչի մեծ խնատութեան :  
 Ձի անշուշտ է թէ ով որ կը շրջի  
 Նոր երկիր , քաղաք , հարկաւ կը շաշի  
 Փորձառութիւն մեծ , խոհեմութիւն , խելք :  
 Արդ մեր ծիծառն ինչ կընէր , այն պատմեմք :  
 Կը նախատեսէր ամեն փոթորիկ ,  
 Ձոր իմաց կուտար առ ծովու մարդիկ :  
 Օր մի նշմարեց , յայն եզմնակին  
 Յարում սերմանեն զտերմ կանեփին ,  
 Թէ գիւղացի ոք սովաւ կը ծածկէր  
 Գաշտաց և անդոց անթիւ ակօսներ :  
 Ծիծառն , սրտատանջ , խոխոյն թռտու գնաց ,  
 Արագ սուբարով մերձ իւր ազգակցաց :  
 Կրտէ . « Բարեկամք , ինձ ունին գրէք .  
 Վասնզ պատրաստի ձեր գլխոյն . մեղք էք .

Ձիս չեմ հոգար ես . չիք իմ երկիրս բնու .  
 Ձի կարեմ գաղթել դէպ չիւսիս , հարա .  
 Տեսէք սա ձեռքն որ ընդ օդ կը շրջի ,  
 Անտի ուր ու կոծ ձեզ պիտի առթի :  
 Այս կանեփհատէն վազ կը բուսանի  
 Թել մ'ուստ յօրինեն զանազան գործի .  
 Որոգայթ հիւսկէն , ցանց , վարմ ու դարան ,  
 Որ կապեն , որսան գձեզ մջ աշխան :  
 Յայնժամ ի վանդակս դերի կը լինիք  
 Կամ իրբե ի հող , յարիւղ կը թաղուիք :  
 Արդ , ընդ փոյթ , ով ծխաք , լորք ու ցախաբեկք ,  
 Ուշ գրէք խօսքիս , սա հունտերն կերէք : »  
 Թռչիկէք՝ անխորհուրդ գնա ծաղրելին .  
 Ձի յանդի բազում կեր գտանէին .  
 Կանեփն ծրու . դիտե՛ Ծիծառն գարձեալ  
 Չայնս խրատեց : Կրտէ . « Անիծեալ  
 Հունաս այս ծիւր է . որդեակք իմ , եկէք ,  
 Մէկիկ մէկիկ վայն խոխոյն փետեցէք .  
 Սպա թէ ոչ , մահ անձողալուի  
 Ձեզ ամենեցուն անտի կը նիւթի : »  
 Թռչիկէք անխոհեմ սրտատխան տուին՝  
 Ըհ , սա բօթարեր մարդարէ ունին .  
 Որչափ բարբառն ջանք . շատխօս , չարակրատ . . .  
 Միթէ գլուխ հանել կարելի է սյդ :  
 Բիւրաւոր թոշուն մէկտեղ քալ սկսաք է  
 Որ սյդ չափ արտի ծիւրն յատակէ : »  
 Արդ կանեփն հատու . ծիծառնիկն սլրաց ,  
 Իւր անխորձ ազգին վերայ գրաւ լաց .  
 Կրտէ . « Անգամ մ'ալ գնա խրատեմ .





Գուցէ սթափին ու կը յաջողեմ:» —  
 — « Արդեանկք իմ, ըսաւ, ահա ժամանակ  
 Բոյնէն չեղնելոյ, զի բազում ծուլակ  
 Ձեր դեմ կը լարեն: չէք կարող գաղթել  
 կրունկի պէս. ապա պէտք չէ դուրս ելնել:»  
 Դարձեալ անօգուտ. թռչնիկք վերստին  
 Խրատուց նորա բնաւ չանասցին:  
 Աւստի եղև ինչ որ ծիծառն խոհեմ  
 Նոցա գուշակեց. զի հաւորսք դժխեմ  
 Դարան լարելով զնոսա կալան.  
 Անթիւ անհամար վանդակներ լցան  
 Քաղցրածայն արտուտք, թշուառ սոխակներ.  
 Եւ այլ գանազան ձայնող թռչուններ:  
 Մինչ կաթասցից մէջ հէգ ճնճողիք անբաւ  
 Ընդ որից զարձան պատուական փէլաւ:

Ա.Ռ.Ա.Կ. Թ.


ԵՐԿՈՒ ԶՈՐԻ

Երկու ջորի  
 Անկան յուզի.  
 Մին ոսկի բեռ,  
 Միւսն յարդ ունէր:  
 Ոսկերարձն էր  
 Անպարհատած.  
 Իւր ընկերին  
 Բնաւ չէր հաճ:

Բօժօժ վզին  
 Հնչեցունէ.  
 Այդ քալուածքով  
 Կը տրոփէ:  
 Երբ յանտառին  
 Խուփը մ'աւազակ  
 Կալան նորա  
 Երասանակ:  
 Անմիտ ջորին  
 Իւր կարճ խելքով  
 Յարզի ոսկին  
 Կուզէ պահել  
 Աքացի բուռն  
 Հարուածներով:  
 Յայնժամ գողերն  
 Գաւազաններն  
 Վեր կը հանեն,  
 Բմբաստ ջորին  
 Լաւ կը թողին:  
 Խեղճ կենդանին  
 Կըսկսի լալ.  
 Մէջքին ցաւէն  
 Դատն ողբալ:  
 « Այս ի՞նչ բաղդ է  
 Ով Տէր, կըսէ.  
 Այս անգութ ճեճ  
 Վարձքիս տեղ է:  
 Սա յարդ բեռցած  
 Կենդանին ցած



99-8175





Ինչպէս չանկաւ  
 Մէջ վտանգին  
 Մինչդեռ ոսկին  
 Ես կը տանիմ  
 Ու ծեծի տակ  
 Կը տառապիմ : »  
 Միւս Գրաստն  
 Կըսէ . « Բնկեր ,  
 Լաւ բան չեն միշտ  
 Մեծ պաշտօններ :  
 Եթէ դու ալ  
 Նման ինձի ,  
 Ծառայէիր  
 Չաղարցպանի ,  
 Այդ ծեծ բնաւ  
 Չէիր ուտեր : »



ԱՌԱԿ Ժ

ԱԳՈՍԻ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Ագուան ծառն էր թառած ,  
 Կային մէջ պանիր բռնած :  
 Սատան Ազուէան հոտն առաւ .  
 Վազեց ծառին տակ եկաւ :  
 « Բարբ լոյս , Տէր իմ , կըսէ .  
 Այդ ինչ աղորիկ գէ՛մբ է :

Եթէ քո քաղցր գեղգեղ  
 Է փետրոյդ պէս հրաշագեղ ,  
 Անզոյգ ես ի սուրակի .  
 Սրպէս փրկելին առակի : »  
 Այս գովեստ գ՛Սգուան ուսոյց .  
 Խեղճն ալ գլխէն թոսոյց .  
 Եւ որպէս զի ցոյց տայ թէ  
 Չայնն ալ նոյնչափ ազւոր է ,  
 Լայնիկեկ բացաւ իւր կտուց .  
 Պանիրը բերնէն թողուց :  
 Ազուէան իսկոյն զայն լափեց .  
 Ապա խօսքին ձև փոխեց .  
 « Շողքորթք ամեն ատեն ,  
 Որին քթէն որ բռնեն  
 Կուտեն նորա բերնին որս .  
 Միտքդ պահէ իմ աղւորս :  
 Այս իմ օգտակար խրատ  
 Պանիր կարժէ երկու հատ : »  
 Խեղճ թռչնիկն խաղք եղաւ .  
 Ալ չը խաբուի ուխտ ըրաւ .  
 Ի՞նչ օգուտ . ժամն անցեր էր  
 Որսը բերնէն գացեր էր :



ԱՌԱԿ ԺԱ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՆԱՍՆՈՅ  
 Երինջն , Այծն ու Մագինն .  
 Մի հուժկու Ասիւծու հետ



Ընկերութիւն կազմեցին .  
 Թէ շահ թէ զեան հաւասար  
 Բաժնեւոյ պայման դրին :  
 Մեր Այծի բարի բաղլէն  
 Իւր լարած դարանին մէջ  
 Բռնուեցաւ եղջիւրէն  
 Ճապուկ եղջերու մ'անդէն :  
 Մօրուքն , ուրախ , ընկերաց  
 Չայս դէպքն կուտայ խնայ :

Այծն , երինջն ու Ոչխար  
 Են կենդանի յոյժ ազար .  
 Ոչ ճանկ , ոչ ժանիք ունին  
 Որ թշնամեոյ դէմ կուռին :  
 Արդ առիւծն անցաւ յառաջ  
 Վեր բարձաւ զիւր անեղ աջ :  
 Մահառիթ ճանկ թաթերուն  
 Սարսափ ազդեց ամենուն ,  
 Երբ նոքօք զընկերս համբեց .  
 Եւ ի ձայն անեղ գոչեց .  
 « Յայտնի է , չորս ընկեր եմք :  
 Այնչափի հարկ է բաժնեմք : »

Հազիւ ակնթարթ մ'անցաւ  
 Երբ զորս չորս բաժին ըրաւ .  
 Ու նոյն ահուելի ձայնիւ  
 Նոցա այսպէս խօսեցաւ .  
 « Գիտէք , ես ձեր արքայն եմ .  
 Չորքոտանեաց վեհապետ .  
 Արդ առջի մասն ես առնեմ .  
 Այսպէս է արժանն ու պէտ : »

Ոգորմելի ընկերներ  
 Չեն համարձակիր մերժել ,  
 Քանզի նորա աչերէն  
 Կրակ ու բոց կը ցայտէր :  
 « Իսկ երկրորդ բաժին , կըսէ ,  
 Այն իմ սուրբ իրաւունքս է .  
 Չի ի ձեզ՝ քան զիս , Առիւծ ,  
 Հգորագոյնն սկէ :  
 Հարկ է երրորդն իմ լինի .  
 Ես եմ հանուրց կորովի :  
 Սակայն եթէ ի ձէնջ ոք  
 Չորրորդ կաորին դպչի ,  
 Սա ճաշիկս կը թողեմ .  
 Յառաջ զայն կը խոյխողեմ : » —  
 — Նոյն բանն է միշտ պատահեր  
 Երբ հգորին հեա ընկեր  
 Տկարն է եղեր :

ԱՌՍԿ ԺԲ

ԱԳՈՒԷՍ ԵՒ ՈՐԹ

Անօթի Աղուէան բերանք բացեր ,  
 Լեա ու ձոր անկած կուր կը փնտաւէր .  
 Յանկարծ տեսաւ Որթ մ'երկայն ուսերով ,  
 Կարմիր ու հասուն լի ողկոյզներով :  
 Բերնին ջուրերն չը կարաց բռնել .



Ծով էր կենդանին շատ օրէ ի վեր :  
 Ուստի խենդի պէս վրան կը նետուի .  
 Որթին բունն ի վեր մագլէլ կաշխատի .  
 Կը յոգնի սաստիկ , սական չը հասնիր ,  
 Քանցի անիծեալ որթն էր բարձրագիր :  
 Եւ չը կը հնարէ խորամանկն խելոյն  
 Որպէս զի ծածկէ իրեն խաղքութիւն :  
 « Հըն , կըսէ , այս ինչ խակ ու թթու բան .  
 Տես , բոլորովին աղոթի նման . . . :  
 Բոչայից եւ շաւիկի բոչայից թողում :  
 Քիտար մարդ երբ է կերեր միս հում հում : »

ԱՌՍԿ ԺԳ

ԱՔԱՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Աքաղաղ մի մէջ աղբիւսին  
 Գառ մարգարիտ թանկագին :  
 Զայն ոսկերիչին կը տանի  
 Կը վաճառէ գարւոյ հատի :  
 « Այդ լաւ բան է ,  
 Գիտեմ , կըսէ .  
 Բայց ինձ համար  
 Անպիտան է : »

Տգէտ մարդիկ ինչ բանէ որ համ չառնեն ,  
 Այն անպիտան ու անօգուտ է կըսեն :

ԱՌՍԿ ԺԴ

ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Ուժեղին քով տկարն է միշտ յանցաւոր :  
 Իրաւունք ունի նա որ  
 Յաղթող է  
 Եւ հզօր :



Ծարաւ Գառն ջուր կը խմէր  
 Վճիտ առուի հոսանքէն .  
 Մի Գայլ , որ բաղդ կը խնդրէր ,  
 Կտես զնա հեռուէն :  
 Գաղանք ծով էր  
 Զորս օրէ ի վեր :

Արդ ի՞նչ հնարք հնարէ  
 Որ անմեղ գառնուկն ուտէ .  
 Զը լինելով անիրաւ .  
 Այլ ձեռով , դատաստանաւ :  
 Մերձ կերթայ Գառին ,  
 Կը գոչէ ու ժգին .  
 « Վայ , այդ ինչ յանդգնութիւն  
 Որ կը պղտորես իմ ջուրն :  
 Գու կեցիր . պատժեմ գքեկ  
 Որ սկ այդպէս բան չընես : »  
 Գառն , երկիւզահար  
 Ճիտը ծուեց վար  
 Աւ կըսէ խոնարհ .

« Ծառայ եմ , մի բարկանար .  
 Տէր իմ , այլ տուր ինձ հրաման »



Որ տամ ձեզ մի պատասխան :

Շնորհ . քննեցէք

Սա աեզ . չափեցէք

Եւ աեսէք .

Կուտաս կը խմեմ ջուր

Չենէ վար քան քայլ հարիւր .

Արդ չէ ինձ բնաւ կարելի

Պղտորել ձեր ըմպելի : » —

— « Երկրաչափի եմ ես ,

Գարշելիդ գրեզ : »

Կըսէ գազանն կատաղի .

« Հերու չէ առջի տարի

Չար խօսեցար դու զինէն .

Ինձի սցնպէս կը պատմեն : » —

— « Տէր իմ , գեղդ ինչպէս

Կարեմ ընել ես .

Մինչ դեռ կուտեմ կաթ

Իմ մերմէս : » —

— « Եթէ դու չես , եղբայրդ է : » —

— « Եղբայր չունիմ : » — « Քո հայրդ է :

Քանզի գիտեմ ես շատ լաւ

Չէք խնայեր մեզ բնաւ .

Գուք , չար շուներնիդ ,

Փանտ հովիւներնիդ :

Արդ վրէժ առնեմ : » լատ . ,

Բռնեց զՔատն ու տարու

Յիւր որջն ու կերաւ ,

### Յ.Ռ.Ա.Կ ԺԵ

Գ.Ա.ՅԼ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Տօնի օր մ'էր , Գայլն գնաց

Ի տուն իւր սերտ բարեկամաց :

Բազմեցուցին զայն ի սեղան

Եւ արարին մեծ խրախճան :

Ի ճաշէն Գայլին յորկոր

Մնաց եղին մի մեծ սսկոր :

Ամենայն ջանք ի դորձ դբաւ ,

Բայց հաներց ճար չը գտաւ .

Չայն ալ չունէր պօռալու ,

Մարդ օգնութեան կանչելու :

Մէկ մ'ալ նայիս որ անտառէն

Մի Արագիլ կանցնի մօտէն

Նմա նշան կրնեն տունէն :

Տօքթօրուհին խկոյն կուգայ ,

Գայլին բերան բանալ կուտայ .

Յետ բազում դեզ ու դարմանէ

Կոցան գոսկրը կը հանէ ,

Ապա իւր վարձք կը պահանջէ :

« Քոյրիկ , թողանկ մի , չամաչեն ,

Որ ելեր վարձք կը պահանջես .

Փառք չըտաս , չը կերայ գրեզ : »

Կըսէ դաժան Գայլն աներես :

Չար մարդոց երբ բարիք ընես ,

Ապերախտութիւն կը տեսնես :



ԱՌԱԿ ԺԶ

ՓՈՍՈՒՌՈՒՅՑ ԵՒ ՕԶ

Ճանճիկն լուսատու  
 Փայլէր ընդ վարդով .  
 Օձն առ նախանձու  
 Կճեց զնա խայթով :  
 « Ի՞նչ զեան տուի քեզ ,  
 Որ զիս մեռցունես : »  
 Փոսուռայն ճայնեց .  
 Ու հոգին փչեց :  
 — « Երբ այդպէս փայլես ,  
 Ալ ի՞նչ զեան կուզես : »  
 Օձն այն ըսաւ  
 Չարագաւ :

ԱՌԱԿ ԺԷ

ՊՍՏՂԱԲԱՇԻ

Պատրող Աստղարաշխն  
 Երբ յերկինս հայէր ,  
 Աստղեր կարդալով  
 Վազիւն գուշակէր ,  
 Ուրք սահեցաւ ,  
 Յանկարծ հոր մ'անկաւ :  
 Անցորդներն ըսին .

« Վայ խեղճ կենդանին .  
 Տեսնել կարող չէ  
 Ոտիցը ներքե ,  
 Ու գլխոյն վերե  
 Կարգալ երբ է : »

ԱՌԱԿ ԺԸ

ԱՌԻԻԾ ԱԼԵԻՈՐ

Առիւծն , լերանց այն ամեհի թագաւոր  
 Տարիքն առաւ , եղաւ խուռած , ալեւոր :  
 Մարդախոշոչ սուր ժանիքներն թափեցան ,  
 Ու գիշատիչ ահեղ ճիրանքն բթացան :  
 Հէգ անասունն իւր նախնի փառք կը յիշէր ,  
 Արտասուածոր աչօք անցեալն կերանէր :  
 Օր մի երբ սա իւր անտառին մէջ պատկած ,  
 Կուլար , վայէր իւր հաշմանդամ անզօր անձ ,  
 Իւր հպատակ կենդանիներ կը վագեն  
 Որ երեսն քաշած չարեաց վրէժն հանեն :  
 Սոքա իւրեանց արքայն անզօր տեսնելով  
 Ոգի աուեր , առիւծ եղեր են սրտով :  
 Ձին ամրակաւ քթին բերնին կաքացէ .  
 Գալարեղջիւր ելլալ կուգայ կը խեթկէ :  
 Ողորմելի ծերն մանչել չէ կարող .  
 Այլ օրհասին կըստասէ նա , համբերող :  
 Մակայն երբ ցած էջն ալ կուգայ յիւր անձաւ ,  
 Կրտէ Առիւծն . « Ահա հիմա չափն անցաւ :



Ո՛վ Աստուած , առ արդ հոգիս որ ազատիմ .  
 Քան թէ այսչափ նուաստանամ , անարգիմ :  
 Ասանկ ապուշ աւանակէ նախատիլ  
 Կրկին անգամ է մեռնիլ : »

ԱՌՍԿ ԺԹ

ՇԻՆԱԿԱՆՆ

Պահեր էր մեր գիւղացին  
 Իւր պանիր մէջ մառանին :  
 Երբ ծակէն տեսաւ մի մուկ  
 Խոշոր ու գիրուկ ,  
 Կատուն ներս կը մուծանէ  
 Որ թշնամին հալածէ  
 Ու իւր ճաշիկն ազատէ :  
 Փխիկը երբ ներս մտաւ ,  
 Գիտես ինչ ըրաւ .  
 Մուկն ալ պանիրն ալ կերաւ :

ԱՌՍԿ Ի

ԿԱՂՆԻ ՆԻ ՆՂԼԻՔՆ

Յաւուր միում Կաղնին կրսէ Եղեղան .  
 « Բնութեան զէմ գժգոհելու քեզի շատ պատ-  
 (ճառներ կան .

Ծիտ մի թէ վերագ թառի ,  
 Մէջքդ գետին կը ծըռի :  
 Քաղցրաշունչ հողմիկ ,  
 Թեթե զեփուռիկ  
 Քեզ են փոթորիկ .  
 Մինչ բուռն մրրիկ ,  
 Եւ հօր քամիք

Մինչև անգամ չարժեղու  
 Կարող չեն մէկ ճիւղս հուժկու :  
 Կովկաս լերին պէս  
 Եւ շքեղապէս

Զուղ արփոյն կարգիլեմ :  
 Հողմոց սաստ կարհամարեմ :  
 Ո՛վ եղիկի , գոնէ գայիր ,  
 Ինձի մօտ մի տեղ բուսնելիր ,  
 Կը պահէի գքեզ հողմն :

Այդ վիճակդ է քո չար բազմէն : »  
 Եղէգն բաւ . « Տէր իմ , սրչափ բարի ես ,  
 Գործդ ձգեր , և ուրիշներն հոգ կընես :  
 Զիս այնչափ խեղճ մի կարծեր  
 Փոթորիկն ինձ փնաս չընէր :

Կը ծռիմ , իրաւ .  
 Չեմ կոտրիր բնաւ :  
 Բայց այսքանի  
 Խօսքեր ինչի՞  
 Օգուտ ունի :  
 Ամեն բանի  
 Կէտ վախճանի  
 Է գովելի :



Արդ համբերեմք .

Վերջը տեսնեմք :»

Հազիւ թէ Եղէզն այս խօսքերն ըսաւ ,  
Յանկարծ հիւսիսի քամի մ'է բրթաւ .

Սաստիկ անձրևով , խոչոր կարկուտով ,  
Լցուց անասաւր գոռում գոջումով :

Հողմոյն բաղխմանէն կաղնին չը ծաւալ .  
Իսկ Եղէզն մինչև գետին պառկեցաւ .

Քամին քանի գնաց այնչափ կատղեցաւ .  
Սաստիկացաւ խստիւ , գոռաց , մռնչեց .

Մինչև արմատէն փլուց ու խլեց

Այն հաղարամեաց կաղնին

Ահագին ,

Որոյ գլուխ մինչև ամպերն կը հասնէր  
Ու ստքերը դժոխոց դուռն էր յեցեր :

ԱՌՍԿ ԻՍ

ԸՄՔԻՇ ԵՒ ԱՌԻԻԾ

Ի ցոյց դրուած բնտիր նկար  
Փողոցը կար .

Ուր նկարիչն ըմբշի պատկեր  
Էր յօրինէր :

Այս մարդ մի յաղթ առիւծու հետ ,  
Ըմբիշ վարպետ ,

Արիարար գօտեմարտեր ,  
Զգեաներ էր :

Անցնող դարձող զայս տեսնելով ,  
Բիւրաւոր գով .

Կուտան ըմբշին . և իւրեանց ազգ  
Տիրտանաց կարգ

Կը գտան . Երբ Ասիւ ծ մ'անկարծ  
Անդ մօտ գնաց :

Կըսէ . «Ընդէր այդչափ , եղբարք ,  
Կը պարծենաք .

Պատկերհանը ձեզ խաբեր է .  
Այն . բարէ :

Եթէ ի՞նչ ցեղ կարող էինէր  
Նկար շինել ,

Իրաւամբ դուք կերթայիք տակ  
Լինէիք խաղք :»

— 0 —

ԱՌՍԿ ԻԲ

Մ Ե Ռ Ե Լ Ո Յ

Հանդուցելոց յիշատակն էր .

Հայր մ'իւր մանկան ձեռքէն բռներ  
Ի սգապատ դաշտ էր տարեր :

Ասդին առէին ստոտտակով  
Տղայն կարդաց հեզ հեզելով ,

Տապանադիրք հանդուցելոց .  
Ի քուն մահու ննջեցելոց :

«Սոքա ամենեքեան ,  
Թէ մեծ թէ անչան ,

Հոչակաւոր գործեր  
Նն կատարեր :

Եղեր են շատ բարի  
Եւ յոյժ առաքինի :

Սոցա վարած կեանքն , ըսես ,  
Յայսմ անցաւոր աշխարհի ,

Մեզ վերջնոց օրինակի  
Տեղ են եղեր արժանապէս :»



Ահա այսպէս կը խօսէին  
Արճանագիրք գերեզմանին :  
Կը դառնային ետ : Մեր մանկիկ  
Պարզնօրէն կըսէ . « Հայրիկ ,  
Հապա ո՞ւր թաղեր են .  
Եւ ուր տեղ կը թաղեն  
                    Չայն մարդիկ ,  
Որ գործեր են և կը գործեն ,  
Ինչպէս որ միշտ կը սլառուեն ,  
                    Շատ չարիք : »  
Հայրն ժպտեցաւ ,  
Ու սապէս ըսաւ .  
                    « Տղան ,  
Չար մարդերն նոքա են  
Որ ընդ հողով ծածկեալ չեն .  
                    Լաւ գիտնաս :  
Բայց երբ մարդս կը մեռնի ,  
Յայնժամ բարի կը լինի ,  
Կտաարեալ առաքինի :  
Ճիշդ քեզի պէս , հողինս .  
Երբ արթուն կը լինիս ,  
Մայրդ կը կարծէ թէ  
Տան մէջ ծած ելեր է :  
Այլ երբ յանկողնի ես ,  
                    Ու կը ննջես ,  
                    Դու չըզխտես  
                    Թէ ինչպէս  
Առաքինի ու բարի ես : »



24710

504,

№ 1

5070

ՀՀ Ազգային գրադարան



NL0835125

4

ՀՀ Ազգային գրադարան



NL0835124

3

ՀՀ Ազգային գրադարան



NL0835123

2

Հայաստանի Ազգային գրադարան



NL0446694

1



